

Քաղվածք

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016 թ. փետրվարի 9-ի նիստի N 151 արձանագրությունից

Լսեցին - ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու հարցում ԵՊՀ գիտական խորհրդին միջնորդելու մասին:

2008 թ.-ին ՀՀ ԱԳ նախարար նշանակվելուց ի վեր Է. Նալբանդյանն ավանդույթ է դարձրել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առաջին կուրսեցիների հետ հանդիպելը, ուսումնական տարվա առաջին դաս անցկացնելը: Այդ հանդիպումների ընթացքում հնչում են արտաքին քաղաքական հարցերի էությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր, որոնց սիրով ու պատրաստակամությամբ պատասխանում է նախարարը:

ՀՀ ԱԳՆ և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջև խորացող համագործակցությունը կանոնակարգելու նպատակով երկու տարի առաջ ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը ամեն կերպ աջակցում է ֆակուլտետում բազմազան միջոցառումների կազմակերպմանը: ԱԳ նախարարը նաև հետամուտ է լինում ԱԳՆ դիվանագիտական դպրոցի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջև փոխգործակցության ընդլայնմանն ու խորացմանը: Հատկանշական է, որ Է. Նալբանդյանը խրախուսում է ԱԳՆ գիտական աստիճաններ ունեցող կադրերի՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասախոսելու հանգամանքը, ինչը կարևորվում է ուսումնառության պրակտիկ հենքի կայացման առումով:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆ.

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոց.

Խ. Գալստյան